ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

Հ/Հ	Համայնք	Միջոցառում	Օրը	Ժամը	Վայրը
1	Սպիտակ	Սպիտակ համայնքի ավագանու արտահերթ նիստ	11.11.2020թ	15:00	Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճում ք. Սպիտակ Շահումյան 7

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Digitally signed by SAHAKYAN GAGIK 3707650340 Date: 2020.11.09 20:19:21 AMT Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Գյուլազյան

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 11-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Հ. Միրզոյան/

2. Ֆակտորինգային միջոցներ ներգրավելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

3. Վիրավորված անձանց ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա. Գյուլազյան/

4. Սպիտակ համայնքի ՈՒզբեկական թաղամասում գտնվող 06-006-0165-0002 կադաստրային ծածկագրով հողամասը, դրա վրա գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության շինությունները Սպիտակ համայնքի սեփականություն ճանաչելու և նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Լ. Համբարյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված
Սպիտակ համայնքի ավագանու
2020 թվականի հոկտեմբերի____ թիվ -Ն որոշման

հազ. դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները		Ընդամենը	Ավելացում	Պակասեցում	Օրենսդիր և գործադիր մարմիններ	Հանգիստ մշակույթ և կրոն	Փողոցային լուսավորություն	Բնակարանային շինարարություն	Բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրաս.	Արտադպրոցական կրթություն Երաժշ. դպ.	Արտադպրոցական կրթություն Գեղ. դպ.	Պահուստային միջոցներ
1	2	3	4	5		6	7	9	10	11	12	13	14	15	16	17
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		0	37 280.0	-37 280.0	3 500,0	17 100.0	9 750,0	5 400.0	250.0	900.0	3 800.0	-33 700.0
2111	1	1	1	Կոմունալ ծառայություններ	4213	50,0	50,0		50,0							
				Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	-500.0		-500.0	-500.0							
				Համակարգչային ծառայություններ	4232	30,0	30,0		30,0							
				Տեղեկատվական ծառայություն	4234	-150.0		-150.0	-150.0							
				Կառավարչական ծառայություններ	4235	-2 930.0		-2 930.0	-2930.0							
2611	6	1	1	Շենքերի և շինությունների կառուցում	5112	5 400,0	5 400,0					5 400,0				
2641	6	4	1	Շենքերի և շինությունների կառուցում	5112	7 700,0	7 700,0				7 700,0					
				Էներգետիկ ծառայություններ	4212	2 050,0	2 050,0				2 050,0					

2823	8	2	3	Շենքերի և շինությունների կառուցում	5112	17 100.0	17 100.0			17 100.0						
2951	9	5	1	Շենքերի և շինությունների կառուցում	5112	3 500.0	3 500.0								3 500.0	
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	900.0	900.0							900.0		
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	300,0	300,0								300,0	
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	250.0	250.0						250.0			
3112	1 1	1	2	Պահուստային ֆոնդ/ֆոնդային բյուջե/	4891	-33 700.0		-33 700.0								-33 700.0

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է.

Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեով չնախատեսված եկամուտների և ծախսերի փոփոխության անհրաժեշտությամբ:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման՝

1) «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» տնտեստնտեսագիտական դասակարգման 4222 հոդվածում տնտեսվել է 500 000 ՀՀ դրամ,

2) «Տեղեկատվական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4234 հոդվածում տնտեսվել է 150 000 ՀՀ դրամ,

3) «Կառավարչական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4235 հոդվածում տնտեսվել է 2 930 000 ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է տնտեսված գումարներից ուղղել Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման՝

1) «Կոմունալ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4213 հոդված 50 000 ՀՀ դրամ,

2) «Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4232 հոդված 30 000 ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է տնտեսված գումարներից Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Փողոցային լուսավորություն» գործառական դասակարգման «Էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4212 հոդված ուղղել 2 050 000 ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է տնտեսված գումարներից Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» գործառական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ

պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4637 հոդված ուղղել 250 000 ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է տնտեսված գումարներից Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Երաժշտական դպրոց» գործառական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4637 հոդված ուղղել 900 000 ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է տնտեսված գումարներից Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Գեղարվեստի դպրոց» գործառական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման 4637 հոդված ուղղել 300 000 ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի ֆոնդային մասից ուղղել՝

1) 5 400 000 ՀՀ դրամ՝ «Բնակարանային շինարարություն» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդված,

2) 7 700 000 ՀՀ դրամ՝ «Փողոցային լուսավորություն» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդված,

3) 17 100 000 ՀՀ դրամ՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդված,

4) 3 500 000 ՀՀ դրամ՝ «Գեղարվեստի դպրոց» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդված:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որոշման նախագծի ընդունման նպատակն է.

Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել չնախատեսված ծախսերի փոփոխություններ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի

1. Սպիտակի համայնքապետարանի կողմից ձեռբերված ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի և համակարգչային ծառայությունների համար կատարել վճարումներ,

2. Սպիտակ համայնքի ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների ընթացիկ ծախսերը հոգալու համար հատկացնել դրամական միջոցներ,

3. իրականացնել «Ս. Ավետիսյան, 17, Ալ. Մանուկյան, 14 և Թորոսյան, 21 հասցեների բազմաբնակարան շենքերի էներգախնայողության, էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները,

4. «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար կառուցել սանհանգույց:

ԱԿՏԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԲՆՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունվող ակտը նորմատիվ բնույթի իրավական ակտ է, քանի որ, համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար և փոփոխություն է կատարվում նորմատիվ բնույթի իրավական ակտում:

Սույն որոշման նախագծի մշակման գործընթացում ներգրավված ստորաբաժանումներն ու անձինք են.

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունվելու դեպքում Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿ ԱՆՔ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ավագանու «Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծն ընդունվելու դեպքում այլ իրավական ակտեր ընդունելու կամ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 892-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի դիրքորոշումը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի ու «Շտիգեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված Սպիտակ համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային կայանների կառուցման աշխատանքների կատարման գնման թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/37 պայմանագրի շրջանակներում ֆակտորինգային միջոցներ ներգրավելուն:

2. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի ու «ԲԻՈՆԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված Սպիտակ համայնքի կարիքների համար Մուրացան փողոցի, Այգեստան 2, Հարավ Արևմտյան, Իտալական, Շվեյցարական թաղամասերի փողոցային լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների կատարման գնման թիվ ՀՀ ԼՄՍՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-20/21-1 պայմանագրի շրջանակներում ֆակտորինգային միջոցներ ներգրավելուն:

3. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի ու «ԳԵՎՏԱՆԻՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված Սպիտակ համայնքի կարիքների համար Թորոսյան 21 բազմաբնակարան շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների կատարման գնման թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-20/20-3 պայմանագրի շրջանակներում ֆակտորինգային միջոցներ ներգրավելուն:

4. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված պայմանագրերից բխող պահանջի իրավունքի զիջման(ֆակտորինգի) դեպքում ստանձնել 9 (ինը) տոկոսի չափով ֆակտորինգի միջնորդավճարի վճարման պարտավորությունը:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ 50 000-ական ՀՀ դրամի չափով միանվագ դրամական աջակցություն տրամադրել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած պատերազմում վիրավորված և բուժման մեջ գտնվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և Սպիտակ համայնքի ղեկավարին դիմած Սպիտակ համայնքի բնակիչ հանդիսացող անձանց ընտանիքներին:

2. Հաստատել դրամական աջակցություն տրամադրելու մասին դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
Սպիտակ համայնքի ավագանու
2020 թվականի նոյեմբերի ___ -ի թիվ ____ -Ա որոշման

ՑԱՆԿ
դրամական աջակցություն տրամադրելու մասին դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի

1. Պատերազմում վիրավորված և բուժման մեջ գտնվող զինծառայողի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայության համարանիշ,
2. Դիմումատուի անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայության համարանիշ,
3. Տեղեկանք բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին,
4. Վիրավորված լինելու և բուժման մեջ գտնվելու փաստը հաստատող փաստաթուղթ համապատասխան բժշկական կազմակերպությունից:

**Ծանոթություն: Դիմում կարող է ներկայացնել պատերազմում վիրավորված և բուժման մեջ գտնվող զինծառայողը, նրա ամուսինը (կինը), զավակը կամ ծնողը:*

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0165-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ. հունիսի 1-ի թիվ 186 հրամանի, հաշվի առնելով, որ Ուզբեկական թաղամասում գտնվող 06-006-0165-0002 կադաստրային ծածկագրով 0,07977 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, դրա վրա գտնվող 178,75 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 4,7 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 6,08 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 8,11 քառակուսի մետր մակերեսով կաթսայատունը և 37,8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հարթակը առաջին պետական գրանցման ժամանակ հաշվառվել են «անհայտ» քաղաքացու անունով, սակայն անշարժ գույքը Սպիտակի քաղխորհրդի 1996 թվականի օգոստոսի 29-ի արձանագրություն 8, կետ 3 որոշման հիման վրա 30 հոկտեմբերի 1996 թվականի տրամադրված բնակելի տարածության թիվ 31 օրդերի համաձայն հատկացվել է Վարազդատ Երջանիկի Դանիելյանի ընտանիքին և մինչ օրս փաստացի տիրապետվում և օգտագործվում է նրա ընտանիքի կողմից, հիմք ընդունելով Վարազդատ Երջանիկի Դանիելյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի Ուզբեկական թաղամասում գտնվող 06-006-0165-0002 կադաստրային ծածկագրով 0,07977 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, դրա վրա գտնվող 178,75 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 4,7 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը, 6,08 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը, 8,11 քառակուսի մետր մակերեսով կաթսայատունը և 37,8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հարթակը ճանաչել Սպիտակ համայնքի սեփականություն:

2. Համաձայնություն տալ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ Սպիտակ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելուց հետո այն նվիրատվությամբ Վարազդատ Երջանիկի Դանիելյանի ընտանիքին փոխանցելուն: